Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

675

82
F-26

1857

[illegible]011

108

2603

62

# ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

## ԿԱԼԱՆԱՒՈՐ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ, 12 Ноября 1857 года.

*Цензоръ Ив. Кайтмазовъ.*

2003

82
f-26
Աչ
108
1172
1001

# ՇԻԼԼՕՆԵԱՆ

## ԿԱԼԱՆԱՒՈՐ

Քերթուած Լորտ Բայրընի։

Թարգմանութիւն

Մովսէս Օհրապեանց

Արցախեցւոյ:

Սուէրուք գիրք։

Ի Շամախի։

Ի տպարանի Լուհէպէեանց։

1857—ՌՅԶ

[library stamp, partly illegible]
1925

139

Երջանիկ է այն, որ վասն օրինաց
Պատրաստ է զրկել յիւր պատիր կենաց,
Եւ յետ եղիցի նորին ընտանեաց
Անքոյթ պաշտպան բանակ հրեշտակաց։
Երջանիկ է այն, որ վասն հայրենեաց
Ճաշակեաց զմահ խնդութեամբ մտաց։
Ապագայ սերունդք հանդերձեալ ազգաց
Կանգնեսցեն նմա կոթող երախտեաց։

# ՀԱՄԱՌՕՏ

## ԲԱՑԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԻՐՔ

## ՇԻԼԻՈՆ ԴՂԵԿԻ:

Շիլեան դղեակ, յորում 'ի 1530 մինչ ց 1537 ամ կալեալ տառա-պէր երեւելին Բոնիվար, քաղաքացին Ճնեւայ, մարտիրոսն հաւատոյ եւ հայրենասիրութե՛ն, կառուցեալ է 'ի մէջ Կլարանի եւ Վիլնեւայ առ Լեմանեան եզերս լճին Ճնեւայ (Լեմանի):

'Ի նորին պատուհանաց երեւին 'ի միոյ կողմանէ կիրճ Ռոնայ գե-տոյն, հոսա երկարաձգեալ մինչ ցսարսն Մորկլ եւ Մարտինեայ, ձիւնալից լերինք Վալլէոյ եւ բարձրաւանդ քարաժայռք Մելերայ, իսկ 'ի միւս կողմանէ, Մոնտրէ, Շառնէար, Կլարան, Վեվէ, բա-զում գիւղօրայք եւ բազում այլ եւ այլ դղեակք:

Յանդիման սորին պարզի անպարագրելի հարթարդակ մակերեւոյթ ջուրց, որք 'ի հնաւարութեն փակին Է սահմանաւ Խանարէ եւ կալ-տոնթյր եզերաց, յորոց 'ի վերայ երեւ պայծառ կէտք ինչ փայլին, Լօզան, Մորժ, սուրբն Պրէ եւ Րոլ: իսկ 'ի հարաւոյ նորին ա-ռաւօտք ընթացիւք անկանին 'ի բլրոյ հառաջաձայն սահմանք:

Դղեակս այս 'ի չորից կողմանց պատեալ է լայնատարած լճիւ, որոյ խորութն չափ հասանէ ց8 հարիւր փարսախ գաղղիացւոց:

Մարթէ կարծել, թէ եղանէ այն 'ի ջուրս, քանզի քարաժայռն, որ է հիմն նորին՝ աներեւոյթ ոչ երեւի, եւ ուր ալիքն մախորդն լճին, անափ սկսանին ընդարձակ պարիսպք դղեկին:

Բանտն, յոր տառապեր երկելին Բոնիվար, մինչ ցկէս փորեալ է 'ի սեպացեալ քարաժայռի: Աստիճանք նորին հաստատեալք 'ի վե-րայ եօթն սեանց, յենուն 'ի ժայռավէմ ինչ:

Ձմեռ 'ի սեանցն կախի տակաւին այն օղ, զորմէ պնդեալ էին շղթայք Բոնիվարին. իսկ 'ի գետնի առ ներքնախարսխաւ այնր սեան,

երևի փառաւոր լինել գոչեալ յամենաշատագոյն տառապեալ կալանաւորին, որ այնչափ երկար ժամանակս ստիպեցաւ յածել շրջմայակաւ 'ի մի և 'ի նոյն տեղւոջ:

Ու կարի լաւ բացագոյն 'ի կղզէ Ռոնա գետոյն, որ անկանի 'ի լիճն Ջենևայ մերձ առ Վիլնեվ՝ է 'ի բոլորովին ընդարձակութեան Լեմանի դղեակ մի, որ ոչ նշմարի, երբ նաւարկես ընդ լիճն, այլ դժուարաւ մարթ է նկատել զայն 'ի պատուհանից դղեկին:

Նայեցարո՛ւք յիս, եմ ես ծերացեալ,
Ո՛չ 'ի հի՛ն ամաց յայս ալիս յեցեալ։
Ո՛չ ահ վերահաս արար զիս անժամ
'Ի միում և եթ գիշերի զառամ։
Կորացեալ եմ ես ճակատ իմ կնճռեալ.
Ո՛չ ճգունք, վաստակ, ցուրտ կամ տապ վառեալ. . . .
Ա՛յլ մաշեաց 'ի սպառ զիս բուռն բանտին։
Զուրկ յանոյշ քաղցրիկ աւուրց բնաւին,
Զուրկ յառողջ օդոյ 'ի շղթայս կապեալ,
Յամր զառամէի մեղմնժամ հիւծեալ.
Եւ կեանքն ինձ թուէր անկէտ, անվախճան։
Եղկելի վիճակ հօր թշուառական—
Ա՜ռ ջահն հաւատոյ, տօթք շղթայից
Եղև և բաժին որդւոց բոլորից։
Անձինք եօթն էաք, վեցք ահա՛ կորեան։
Հայր մեր նահատակ յամաց մանկունէ,
Այրեցաւ 'ի հուր յալիս ծերունէ։
Երկոքին յեղբարցս 'ի մարտի անկան,
Զփառս և զկեանս 'ի զոհ մատուցին,
Որով սէր հոգւոյ զիւրեանց փրկեցին։
Երեք կենդանւոյն յանդունդս խորին
Թաղեցան, կորեան յանստուեր բանտին. . . .
Նոյն իսկ խորուն եկուլ զերկոսեան.
Իսկ ես մնացի միայնակ կենդան,
Իբրու զաւերակ համայն անբնակ,
Զառ կոծել նոցին դառնունէ վիճակ։

## III.

'Ի մէջ ջուրց կանգնեալ է Ճիլլոն դղեակ,
Հաստեալ 'ի վերայ ամուր սեանց եօթնեակ·
Պատեալ են նոքին գէճ՝ մամռով հնաբոյս,
Յորոց 'ի վերայ շողայ տրտում լոյս։
Նշոյլ ինչ դիպմամբ ծագեալ 'ի բարձանց
Ընդ ճեղքուած որմոյ մուտ առեալ թափանց,
Րոկայծեալ 'ի մէջ թանձր խաւարին,
'Ի վերայ տամուկ, ցուրտ գետնի բանդին՝
Նշողք աղօ՛տ, շողշողայ տխուր,
Իբրև 'ի ճահճի կիսաշէջ ինչ հուր,
'Ի մռայլ գիշերոյ հազիւ երևեալ։
Իւրաքանչիւր սեան ունի զօղ աղխեալ·
Զորոց և շղթայք ամրակուռ կախին·
Եւ այնց կապանաց երկաթ թլունալին
'Ի խոր մխեցաւ՝ կրծեաց զիմ մարմին·
Ոչ լեցի անհետ, այլ կացցէ բնաւին
Եդեալ ինձ նոցին խարան յարակաց։ —
Որ ձանձիր, տաղտուկ թուէր իմ աչաց,
Որք խորտացեալ են 'ի վաղուց ամաց,
Հայել և դիտել զաշխարհ բերկրանաց։
Մինչ վերջին եղբայր իմ վախճանեցաւ,
Հարեալ կապանօք աչացս զառաջեաւ,
'Ի փրկանս անձին հոգիս պաղեցաւ,
Եւ ես ի͞ը մեռեալս մնացեալ կենդանի՝
Կոծ մեծ կոծեցի անդր 'ի բանտի։

## [illegible].

Նոյն խակ շղթայիւք կաք մեք կապեալ,
Ընեեուք է սիւնս պըրկեալ կաշկանդեալ,
Թէ և մերձ միմեանց, սակայն անջատեալ.
Գերեալ կապանօք մնացեալ հիւծեալ. . . .
Մեք ոչ կարէաք զէթ քայլ մի փոխել,
Զառաջեան աչաց զիրեարս ճանաչել:
Զի խաւար բանտին էր մեզ խոչ, արգել,
Որ փոխեաց և մեր զերեսս անընդել,
Մինչ եղբայր եղբօր երևէր օտար:
Այն էր մեզ և էթ միակ մխիթար—
Ձայն տալ իրերաց, ասել և խօսել,
Այնու միմեանց սիրտ յուսով խրախուսել,
Կամ զերևելի զանցս նախնեաց վիպել,
Եւ կամ քաղցրաձայն զերգ մարտի երգել:
Այլ 'ի նոյն է փոյթ, թէ այս և թէ այն
'Ի խաւար բանտին սպառեցաւ համայն:
Նա՝ ձայն մեր եղև վայրագ գլխովին,
Իբրու զարձագանգ ահուելի բանտին:
Չ'էր այն հին ամացն հնչիւն քաղցրագին,
Երբ էաք հզօր ազատ, զուարթագին:
Միթէ ցնորք իցեն . . . . ձայն իմ և նոցին
Միշտ հնչէր, թուէր ինձ ձայն օտարին:

՚Ի մէջ մեր երից երեցն ես էի,
Մոռացայ ես զիմ՝ վիճակ ողբալը,
Յայն և եթ զբաղեալ էի ես հոգով,
Զի մի՛ տաց նոցա վհատիլ հոգւով:
Եղբայր մեր կրտսեր սէր հօր կաթոգին . . . .
Աւաղ, գեղազան կերպ դիմաց նորին,
Քաղցրատես հայեացք, գեղ աչաց անգին,
Կապոյտ և պայծառ իբրու ջինջ երկին,
Զանձկալըն մեր մայր ցանդ մեզ յիշէին:
Նա էր իմ ամէն, եղբայր ծանրագին·
Եւ առ իմ աչօք այս սէր իմ քաղցրիկ,
Չքնաղ դեռափթիթ, հաճելըն ծաղիկ,
Խամրեալ թօշնեցաւ զերթ օդ թափանցիկ·
Կամ նման լուսոյ աւուրցն երջանիկ,
Գրաւեալ մահու չարատանջ պատիկ՝
Որ լուսաւորել զիս ծագեր յերկնից
Մինչ էի ազատ ես առանց կապից:
Իբրու արշալոյս նա զուարթ, մաքուր,
Մանուկ, բայց մտօք՝ էր կայտառ և սուր:
Անփոյթ, աչալուրջ միշտ ինքն ընդ ինքեան . . . .
Այժմ առ օտարին վշտաց տրտմութեան,
՚Ի նորին կապոյտ, գեղաշէշ յաչաց
Սիժեալ խաղային հոսանք արտասուաց:

## Ի.

Երկրորդ իմ եղբօր նոյն սուրբ էր հոգի·
Սակայն զմարտկի ունէր նա զոգի,
Քաջ, հուժկու, յոխորտ'ի ծաղկեալ հասակ,
Խրոխտ կոչել 'ի մարտ զաշխարհ բովանդակ,
Կազմ պատրաստ 'ի մահ, միշտ յառաջընթաց....
Նաւ յոյժ անհանդուրժ ցաւոց կապանաց։
Եւ նա շղթայիւք հիւծեալ չարաչար,
Փութացաւ անդէն 'ի կենաց վճար։
Տեսի, թէ զիարդ ընդ մէջ տագնապաց,
Շիջաւ մերձ առ մեզ, անտես մեր աչաց։
Նա կիրթ, վարժ որսորդ, էր բնակիչ բլրոց,
Սանիչ վարազուց, քանասար գայլոց։—
Ոհ. տապան նորայն էր բանտ միգամած,
Չ'իշխեաց արութիւնն տանիլ կապանաց։

## ԻԱ.

Պատեալ է Շիլոն Լեմանաւ (*) խորին,
Ընչափ է անբաւ յատակ ջուրց նորին։

(*) Լեման է անուն Ժնեւեան լճի։ Հեղինակն կամի ասել, թէ Շիլոն դղեակ 'ի չորից կողմանց պատեալ է խորին լճիւ Ժնեւայ։ Իսկ թէ զի՞նչ իցէ Ժնեւ. և զի՞նչ ինչ իմանալի յատուկ անուամբք՝ որք 'ի նախընթաց բացադրութ՝ ընթերցասէրն գտցէ զանդրէլն յԱշխարհագրութ։

Երկակի պարիսպք, կիհոնց ահագին
Տան անլոյս բանտին զամբուն կրկին:
Տրտում տեսատեղ ժահահոտ և սին,
Մառնամուտ գիծին, յարկ տարտարոսին,
Որ էր կենդանեաց տապան խաւարին՝
Փորեալ էր ընդ ջրովք ՚ի քարաժայռին:
Օ՜ ցայգ և՞ ցերեկ շառաչիւն ալեաց,
Ու մարդիք մերովք դղրդեալ սահանաց,
Ուժգին ճայթելոյ յագուռ պարապաց՝
Լսելի լինէր մերոց ականջաց:
Լոր զի հողմավար յորձանք եւանդեան,
Հասեալ ժամանեալ մինչ ցպատուհան,
՚Ի ցայտ անձրեւի զմեզ սրսկէին.
Եւ էր զի մրրիկք սաստիկ յառնէին,
Յորոց քարաժայռ դողայր, դողդոջէր:
Եւ անյագ ըղձիւ հոգի մեր սպասէր,
Թէ այն երիզուտ անկցի ՚ի կործան,
Ծածկեսցէ զմեզ ՚ի իւր յաւիտեան:
Այո՛, տարաբաղդ ժամն յանկարծ մահուան
Լինէր վասն մեր ժամ ազատութեան:

Միջակ մեր եղբայր, որպէս ասացաւ,
Հոգւով տառապեալ՝ անժամ թօշնեցաւ:
Լքեալ, չարչարեալ, վշտահար, տխուր,
Ոչ կամէր ուտել երբեք կերակուր:
Խիստ էն ուտելիք արտմահոծ բանտին,

Ուժ մ՚ո հօր, որի նետաձգին
Տանիլ այս կարեաց է կարի դիւրին։
փոխանակ Ռուսեան սրծեման կալթին,
Ա՛մ մեր նեխեալ էր ջուր դառնագին.
Իսկ զչոր հաց մեր հանապազորդեան,
Յայն օրէ երբ ժանտ շղթայք քստեղծան՝
Մեզ գերեաց 'ի մէջ անել կապանաց
Մինչ թանալ պարտ էր առուօք արտասուաց։
Ո՛չ թէ ապաժամ 'ի խիստ պիտոյից
Սատեալ մաշեցաւ եղբայրս սրտակից,
Ո՛հ, թէ և լինէր անկարօտ, առատ,
Նոյնպէս թառամէր, թէ չէր նա ազատ. . . .
Եւ առ ի՞նչ լուռ կալ թշուառ իմ անձին։
Գրաւեաց զնա մահ . . . . և ես տալ նմին
Չ՛իշխեցի զիմ ձեռս յայն պահու վերջին։
Չ՛իշխեցի փակել շիջեալ զաչս նորին։
'Ի զուր զիմ շղթայս կրծեցի, հատի—
Մահակցիլ նմա 'ի միում կարգի. . . .
Մեռաւ իմ եղբայր միայն, եղակի։
Մերձ էի առ նա, այլ և յոյժ հեռի.
Կարացի լսել, որպէս նա շնչէր,
Որպէս եղկելին շնչասպառ լինէր,
Օ՝խարդ ջիւր շղթայս դողայր և սարսէր,
Եւ զի՛արդ ահէ յանկարծ շիջանէր
'Ի մէջ խորուն քանտի մթագին. . . .
Նոքա 'ի դիոյն զշղթայս քարձին,
Նուանց դագաղի զնա թաղեցին
'Ի խոր, սառուցեալ ծոց այնր երկրի,

Յորոյ 'ի վերայ լեալ էր նա գերի։
Զուր ես 'ի նոցանց լալով խնդրեցի,
Զի եղբօր իմում գերեզման տացի
Յայնպիսում իմն հանգստեան վայրի,
Ուր հանապազօր լոյս աւուր ծագի։
Անխոհեմ էր այս իմ կարծիք վերջին,
Այլ այն խիստ ճնշէր, ճմլէր զիմ հոգին,
Զի ազատ լիցի գէթ փոշի նորին
'Ի մէջ վիմափոր տապանի խորին։
«Բանզի ինձ թուէր, թէ բանտին 'ի ծոց—
«Երբէք չէ խաղաղ քուն ննջեցելոյ. . .
Այլ իմ արտասուաց էր պատասխանի,
Ցուրտ, կծողական ծիծաղ ծաղրալի.
Եւ եղբօր իմոյ սառուցեալ մարմին
Թաղեցաւ 'ի գէջ հող խաւար բանտին,
Ուրանօր շղթայք, մնացեալք յետ մահուան՝
Առ գլխով նորա ահա 'ի կախ կան.
Որ ոչ անմեղաց այո՛ յիշատակ,
Այլ մարդասպանաց յաւէտ 'ի ծանակ։

## ԺԹ.

Նա էր մեր չքնաղ ծաղիկ աննման,
Մեր անմահ հրեշտակ յամաց մանկութե։
Նա գանձ ցանկալի ընտանեաց համայն.
Եւ բարի հոգւով մօր մերում նման,
Զորոյ գեղեցիկ ունէր կերպարան.
Ըստ որոց և հօր մեր յոյժ սիրական։

Կամեցայ ես կեալ 'ի կենդանութե՛ն,
Զի ուրախ լեցի նա 'ի գերութե՛ն.
Նու յետոյ ազատ կարասցէ լինել. . .
Աբբէ, մանկական մեծի հեզու՛ն,
Որ հանդուրժանօք երկայնմտութե՛ն
Կարաց վիճակին է յերկար տանիլ:
Ո՛չ թէ ես նմա. . . այլ նա էր վ՟ս իմ
Նեցուկ հաստատուն, ընկեր մտերիմ. . .
Յանկարծ օր յորէ յուժոյ թափեցաւ,
Տառապեաց, լռեաց և լո՛ւռ թօշնեցաւ:
Ո՛վ ԱԾ, Աստուած. խի՛ստ է տեսանել,
Երբ մարդոյն զկեանս ձ՛գնի մահ կլանել. . .
Տեսի սարսափմամբ, մի՛նչ վառեալ 'ի մարտ,
Իսկոյն անկանէր ախոյեան անպարտ:
Տեսի երբ նաւորդ մածեալ է տախտակ՝
Հեղձնոյր է նմին 'ի ծովուն յատակ:
'Ի ջո՛ւր նա 'ի փայտ լինէր ապաստան. . .
Յողդողդ յոյս նորին էր յոյս կորստեան:
Տեսի, թէ զիա՛րդ չարագործ դաժան
Վայրենի դիմօք, անզեղջ, զերթ պա՛նքան,
Հայհոյէ՛չ շրթամբք յիշոցս արկանէր,
Մի՛նչ զնա սատակել մահ անագանէր:
Այլ անդ էր երկիւղ. . . իսկ աստ վիշտ և ցաւ,
Տրտմութե՛ն հոգւոյ, տառապանք անզրաւ:
Իբրու հեզ հրեշտակ յանխռով հանգստեան,
Համբե՛ր և խաղաղ, քաղցրիկ և անձայն,
Անյո՛յս համբերող, գո՛գ թօշնեալ ի՛նչ վարդ,

Տրտում է լքեալ, ամպք և հանդարտ,
Շիջաւ իմ եղբայր առանց արտասուաց,
Միայն յիշեալ զիս և զորս յընտանեաց․․․
Աւա՜ղ, նա էանց իբրու ծիածան,
Որ գերգ երանգօք հաճեալ զաչս մարդկան՝
Զքնաղ շիջանի ՚ի կամար երկնից։
Շիջաւ նա անխ՛օս, անվիշտ, յուսալից,
Իբր ՚ի սպանդ վարեալ որոջ անմռունչ,
Զիւրոյ վ՛ճռակէ չ՛ունելով տրտունջ։
Միայն սակաւուք ձայնիւ յոյժ տկար,
Մեր զանցեալ աւուրց մատչէր նա ՚ի ճառ.
Էր զի զապագայ լաւ ժամուց պատմէր,
Էր զի ժպտելով զյուսոյ խօսէր․․․
Այլ սովին մահու անգիւտ կորստեան
Էի զառածեալ յանշունչ մոռացման։
Զուր ՚ի մեռանելն նա զիւր հոգեկան
Գուն գործէր ծածկել զչարչարանս մահուան․․․
Յանկարծ դողալով ցաւագինս շնչեաց,
Եւ անդէն, աւա՜ղ, հանդարտեալ լռեաց․․․
Ահեղ լռութեամբ զարթնում նոյնհետայն,
Լսեմ հիացմամբ․․․ խաղաղ է համայն։
Ուժգին զայրացմամբ արձակեմ կոչիւն․․․
Աձայնէ պարիսպ․․․․ և բաւնի բոմբիւն։
Ջանամ յուսահատ շղթայս հատանել,
Հատի զնոսին անդրէն անարգել․․․
Փութամ առ եղբայր․․․ այլ եղբայր իմ չիք։
Նա իբրու գարնան հաճելի ծաղիկ,
Դեռաբոյս մատաղ, թարմ և գեղեցիկ՝

Հարեալ 'ի ցրտոյ դառնաշունչ սաստիկ,
Կոր 'ի գլուխ յերկիր հանդէպ իմ աչաց,
Կախի նա ը̅ սեւն 'ի մէջ կապանաց։
Ես նորին զանշարժ կալայ զձեռանէ,
Զգացի, զ՛արդ մեղմով անցանէ.
Յայնմիկ հետ տկար վերջին ջերմունն։
Ինձ այնպէս թուէր, թէ իմ հոգեկան
Ոյժ և զօրութ̅ 'ի սպառ վերացան։
Յանկարծ յիս ահեղ պաղեցաւ համայն։
Ես թափառէի ցնորեալ 'ի քանտին. . . .
Այլ անտի հանգիստ էր յոյժ ահագին.
Միայն ժանտաշունչ ցուրտ, ինչ մահաբեր
'Ի գէձ պարսպաց անընդհատ շնչէր։
Եւ զաչս իմ յառեալ 'ի զոհ խիստ մահուան,
Ես ոչ զիս հաստատ կարծէի կենդան։
Ո՛հ, որչափ վիշտ է գիտութ̅ յայնմիկ,
Յորժամ իմանամք մեք անդրէն այնուիկ,
Թէ չի՛ք եւս մեր քաղցրիկ սիրական։
Ո՛վ, զիս ոչ եհար այս ահեղ վայրկեան։
Ո՛չ գիտեմ թէ՛ զի՞նչ. . . . հաւանտ լուսազգեաց
Թէ՛ ձանձրոյթ առ կեանս զիմ կեանս ազատեաց։

## IX.

Այլ թէ զի՛նչ ապա պատահեաց ընդ իս,
Ո՛չ յիշեմ երբէք. . . . զի ոչ գոյր միտք յիս։

Լոյս ինձ երևէր խաւար ինչ աղօտ,
Եւ խաւար վասն իմ էր լոյս անաղօտ.
Կորնչէր այեր լայնուե յանհուն:
Թմրեալ սառուցեալ կայի անխօսուն,
Ուշաթափ, անխել, Թարց ինչ զգայուն,
'Ի մէջ ցուրտ վիմաց զերթ վէմ անկենդան:
Թուէր ինձ համայն իբր 'ի քուն դանդաղ,
Գունատ, միգապատ, մնայր շամանդաղ:
Հեղաւ ամենայն յաղօտ խառն ստուեր:
Այն ոչ էր ոչ օր, և ոչ մութ գիշեր,
Եւ ոչ իմ բանտի լոյս յոյժ ծանրալի,
Այնչափ ատելին աչաց ձանձրալի:
Այն էր աղջամուղջ առանց մթութեան.
Այն էր խոր անդունդ մեծ դատարկուե,
Առանց լայնութեան, անչափ, անսահման.
Նորաստեղծ տեսիլ, դէմք անկերպարան:
Այն էր աշխարհ ինչ նոր և ահագին,
Առանց աստեղաց անլոյս աներկին:
Չէր յայն ժամանակ, ոչ օր, ոչ տարի,
Չէր և Տեւչուն, ոչ չար, ոչ բարի:
Ոչ կեանք և ոչ մահ, այլ քուն տապանաց,
Իբր Ովկիանոս առանց եզերաց,
Ընկճեալ թանձրամած մուայլիւք մթին,
Անշարժ թխպալից, խեղդեալ խաւարչտին:

Յանկարծ սթափեալ յուշ եղէ անձին․
'Ի ձայնէ թռչնոյ՝ որ 'ի վեր բանտին
Էր զի 'ի լուռ կայր, և էր զի երգէր,
Եւ յերկնից առ իս նա իջեալ թուէր։
Զուարճ էր սփոփիչ, քաղցրաձայն կարի,
Որով կախարդեալ եղէ կենդանի,
Ունկն մատուցի, ապշեցայ 'ի սպառ։
Այլ այս բերկրութիւն չեղև է երկար,
Քանզի սկսան միտք իմ վերստին։
Երթալ է սովոր անձկութեան ուղին։
Զարթեայ, ուշ եդի, զարմացեալ տեսի,
Զի նոյն բանտ դարձեալ էր իմ առաջի,
Նոյն իսկ լուռն, նոյն անդ և խաւար։
Ուր շնչէր անդուլ նոյն ցուրտ հողմնվայ
Ուստի նախ աղօտ լոյս աւուր ծագէր
Անդ հերձուած որմոյն առ իս մուտ առնէր
Անդ իմ օդային երգեցիկ նստէր,
Եւ զնուր թևս կապոյտ երերեալ շարժէր։
Նա գեղազարդեալ աւուրբ լուսաբեր։
Ճչէր ողբալուր, տրտմագին ճչէր,
Աւետամատոյց ձայնիւ քո երգէր․ ․ ․
Ո՛վ․ թէ ո՛րչափ այն երգ հոգւոյ ազդէր։
Երևէր զինեն դայլայլիկ նորին։
Ամբէ․ անմոռացք ինձ 'ի յուշ եկին․ ․ ․
Եւ մինչ ցայն նուագ իմ հանգոյն նմին

Չ՚էր երբեք լուեալ ձայն ինչ քաղցրագին։
Թուէր թէ ընդ իս և նա ցաւագին,
Զրկեալ յեղբօրէ՝ կոծէր տրտմագին։
Նա իւր անձկալի սիրով ինձ յայտնեաց,
Թէ ես գէթ 'ի մի սրտէ չե՛մ սիրած։
Երգ նորին վասն իմ էր երգ քաղցրութեան,
Որով ողջացան վէրք իմ հոգեկան։
Այլ ո՛վ էր այս իմ բաղձալի երգիչ։
Մի՞ թէ եթերոյ ազատ բնակիչ,
Կամ նորոգ զերծեալ 'ի խիստ կապանաց՝
Ըստ դիպման առ իմ բանտ խաւարամած,
Խաղալով յերկինս՝ դէպ ուղիղ թռեաց,
Եւ զազատութիւն ինձ անտի երգեաց։
Ասացի՞ց արդեօք. . . . ո՛հ ես կարծեցի,
Թէ եկէ ընդ իս ո՛չ թէ հիւր երկրի,
Այլ հիւր Եդեմայ, — եղբօր իմ ոգի,
Որ 'ի սփոփել զիմ սիրտ և հոգի,
Առեալ ձև թռչնոյ, յերկնից փութացաւ. . . .
Այլ մխիթարիչս յանկարծ վերացաւ,
Սլացաւ նա 'ի լոյս հասարակ աւուր. . . .
Ոչ, ո՛չ, չէր նա իմ եղբայր սուրբ մաքուր. . . .
Որ ո՛չ թողոյր զիս այսպէս խստագին,
Զի 'ի նմանէ մեկնեալ իմ կրկին՝
Մնայի վերստին ես առանձնակի,
Իբրու դի անկեալ 'ի մէջ դեսպակի։

## XI.

Ահա փոխեցաւ յանկարծ իմ վիճակ,
Զի բանտապահից 'ի սիրտ դժնդակ
Եգիտ ճանապարհ գութ ինչ անսովոր։—
Յայն վայր էր նոցա հոգի ահաւոր,
Անդզայքան զիմ երկաթ կապանաց։
Այլ թէ զինչ 'ի գութ զնոսա շարժեաց,
Ո՛ զողորմութիւն յիմ սակս խնդրեաց,
Կամ է՞ր խստուն յիս այսչափ խնայեաց,
Ես ոչինչ գիտեմ. . . . Միայն զի դարձեալ
Կապանօք ը̃ պատ չէի ես պնդեալ։
Զիմ պարմանոցէ շղթայք իմ ջաղխեալ,
Յանգ շառաչէին ցեր և ցան կախեալ։
Առ որմովք շուրջ զսեամբք 'ի միջի բանտին
Ես տատանէի անդուլ ը̃ նոսին,
Միայն ո՛չ երբէք իշխէի զտապան,
Կոխել առ ոտիւք զեղբարց սիրական.
Զի մի՛ նեղեցից ես անդ զերկրայն
Իմ անսուրբ հետովք սրբութիւն վերջին։

## XII.

Ինձ յանմահետէ չէր ինչ դժուարին
Գործել շղթայիւք վերելակս յորմին։

Բայց ազատութիւն էր կարի հեռի
Յիմ սրտում մնաց . . . և յանձնէ գերի։
Ահ. որբ էի ես, և աշխարհ համայն
Խորդացաւ վասն իմ, կեանք իմ էր ունայն։
Ընդելացուցի զիմ կեանս ընդ բանտին,
Ուր և զիմ բոլոր ընտանիս անգին,
Օ՜ որ ես քաջ ծանեայ, և զոր սիրեցի,
Մեղէ՜, մի առ մի անդամ թաղեցի։
Եւ յիշխանութեան աւուր խնդաբեր
Սեամն իմ տակաւին ոչ ոք բնակէր։
Ես առանց տեղւոյ 'ի խնջոյս երկրի,
Էի անդ օտար հիւր վարկպարազի,
Նման իբրու ամպ ինչ 'ի յաւուր պայծառ,
Կորեալ 'ի բարձունս, մոլորեալ, խաւար,
Առ ճառագայթիւք ջինջ արեգական,
'Ի վերայ երկնից բնաւ անպիտան. . . .
Այլ ես կամեցայ զաչացս ճայեցուած
Արձակել 'ի գեղ ինձ ծանօթ լերանց,
Յանտառս և 'ի ժայռս նոցին սեպացեալ,
Նոյն և 'ի յերկինս ընդ նոսին մածեալ։

## XIII

Տեսի զայնոսիկ, — և բոլորք նոքին,
Էին անփոփոխ ըստ նախնի կերպին,

Կուտակք դալրու ձեանց 'ի կատարս նոցին,
Որոց 'ի լանջի հովիտք ծաղկածին,
Առ ստորոտին էր անդունդ լճոյն։
Յորձանք սահմանաց Ռոնա յորդ գետոյն
Փայլէին 'ի մէջ կանաչ եզերաց։
Եւ ինձ լսելի էր ձայն աղբերաց,
Հեղլոց կարկաչմամբ ը̅ ժայռ հարելոց։
Ընդ խաղաղ երես կապուտերանգ ջրոց
Թռչէին յստակ փայլուն կոյտք ամպոց,
Օ՜ երթ տիպ սքանչելի, դիրք չքնաղ բլրոց։
Արագ առագաստ նաւաղօղակի
Երկնից և ջրոց վազէր 'ի մէջն։
Զքաւոր խորհիթք լուրջ ղինակամաց,
Եւ շքեղ շինուածք պայծառ քաղաքաց,
Առ եզերբ ը̅ մեզ շուրջ արձակէին. . .
Ես նշմարեցի փոքրիկ ինչ կղզեակ,
Գեղեցիկ, զուարթ, սակայն միայնակ։
Էր այն 'ի կապոյտ ը̅արձակութեան,
Ուր ծաղկէին ծառք երեք զանազան։
Շնչէր անդ ջինջ օդ բարձրաւանդ լերանց,
'Ի մէջ սեզոց, հոտաւէտ ծաղկանց։
Եւ ջուրք անդանօր կենդանի էին,
Որ և առ ընդել ափամբքն նոցին,
Պատեալ նազասահ սուր ընթանային։
Տեսի, զի մակոյկ ը̅ վարժ ըղորդաց
Դէպ առ իմ պարիսպ նաւեալ դադարեաց։
Անդ նա առ եզեր առ ժամ մի եկաց,
Եւ եւրոս հողմիկ յաջողակ յարեաւ,

Փոյթ յետադարձեալ, յաչացս ծածկեցաւ։
Ընդ վերին ամպովք խաղայր արծուի,
Վասն զոր սրագոյն 'ի թռիչս ո՛չ տեսի։
Կամ առ լուսամուտն 'ի վայր իջանէր,
Եւ կամ 'ի բարձունս սրասլաց ելանէր. . .
Օ՜ որոյ զհետ և իմ հոգի թռանէր։
Նոր գետ արտասուաց յիմ աչաց բղխէր,
Նոր ինչ տխրուն զկուրծ իմ ձմլէր,
Եւ նոր վիշտ զիմ սիրտ խոցէր կարեվէր. . .
'Ի շղթայս իմ, զոր 'ի բաց ձգեցի,
Դարձեալ յո՛չ կամաց ես խնայեցի։
Իսկ յորժամ 'ի ծոց իմ խոնաւ բանտին
Եղև մտանել ինձ հարկ վերստին. . .
Թուէր, թէ գրկեաց զիս ցուրտ գերեզման,
Թուէր, թէ նորոգ սէր իմ անման,
Հանդէպ իմ աչաց՝ եղբայր իմ անգին
Կայր 'ի կոկորդ անյագ գեձ երկրին։
Այլ զհարդ իմ կուրծ նեղէր ցաւագին,
Հարեալ 'ի վշտաց կարի սաստկագին,
Առ 'ի հանդարտել յաղէտից սրտին,
Ասն իմ սփոփանք էր խաւար բանտին։

## XIV.

Օր գայր հասանէր և օր անցանէր,
Անցին և տարիք գոգ թեթև ստուեր։

Երբէք զայնոսիկ ես ոչ թուեցի։
Զիմ յիշողուն բարձեալ կարծեցի
Զփոփոխունեց, որք յերկրի լինին։
Ահա և մարդիկ վերջապէս եկին
Ինձ զազատուն թշուառ ընծայել.
Վասն էր, կամ զիարդ զայնմանէ գիտել,
Ես ոչ կամեցայ զմտաւ ածել։
'Ի վաղուց ուսայ մի և նոյն կարծել,
Թէ՛ թարց շղթայից, թէ նոյին մէջի,
Ես անյոյս լինել կարի սիրեցի։
Եւ անխտրաբար նոցա անսացի,
Անզգա՛յ, յանհոգս շղթայս համեցի,
Եւ այն ընդերկրեայք, որք նախ ձանձրալի՝
Յանկարծ ինձ դարձան 'ի յարկ ցանկալի . . .
Անդ էր իմ ամէն, ընկեր, ընտանի։—
Սարդ իմոյ բանտի 'ի պատուհանի
Գործէր հանդարտիկ զիւր հմուտ ոստայն։
Եւ 'ի խաղալ անդ խլրտիկ մըկան,
Սիրէի հայիլ առ լուսով լուսնի։ —
Ես առ իմ շղթայս զիմ ձեռն ուսուցի։—
Տե՛ս, երբ եմք մեք մեզ անհաւատարիմ . . .
Ընդ սեամն իմ բանտին երբ անցին ոտք իմ,
Եւ յազատուն այն ինչ քայլեցի,
Վասն իմոյս բանտի ես յոգւոց ելի։

Վ. Ե Ր Զ.

675
2013